

յաւելուած։ Եւ որովհետեւ այս շըջանի համար պահանջվում է յայտնի չափով բրվանդակութեան լիակատարութիւն, և որովհետեւ աշակերտները (9—10 տարի) արդէն մտաւորապէս բաւականաչափ զարդացած էին, ուստի ինչպէս աշխարհական պատմութեան մէջ, այս տեղ ևս կարելի է սկսել անցքերի դասակարգութիւնը. ինչ որ ուսանում էին առանձին առանձին, այժմ նրանք դաս է տրվում բնական կապով։ Պատմական համառօտ նկարադիրները փոխարկվում են կենսագրութիւնների, միայն որչափ կարելի է առարկայի և Աստուածաշնչի պատմութեան տեսակին համեմատ։ Եւ բարոյական խորհրդածութիւնները այժմ աւելի ազդող են լինում, ոչթէ, այսպէս ասած, իբրև օգտակար խրատներ, այլ իբրև համեմատութիւններ, այնպէս զի պատմութիւնները իւրեանց կողմնակի հանգամանքներով առանց մինըշանաւոր զանցառութեան պատմուելով և վերապատճելով՝ աշակերտը ևս բաւական հեշտութեամբ կարողանայ շահուել այս նիւթից։ Կա կարող է համեմատութիւն առնել զանազան ժամանակներում, կեանքի պէս պէս գրութեամբ ապրող անձանց մէջ, որոց մասին Աստուածաշնչի և թէ այլ և այլ պատմութիւնների մէջ պատմուած են, և թէ իրանց, որոնց ինքը իսկ ականատես է։ Եյժմ ևս կարելի է եղելութիւնքը աւելի ընդհանուր հայեացքի ենթարկել։ Առաւելապէս հրահանգիչ է ին Կտակարանը նորի հետ համեմատելը։ Յովհաննես Ակրաչի ծննդեան աւետիքը պատմելու ժամանակ կարելի է յիշատակել և Պամսոնինը և Ամուելինը, որոնք նման են առաջնոյն։ Յիսուսի տաճարին ընծայ-

ւելու պատմութեան հետ կարելի է յիշել և Ամուելի յանձնութիւն ձեղի քահանա. յին տաճարումը. Յիսուսը Եղիպտոսում, Առվակար Փարաւոնի պալատում, Յիսուսը տաճարումը և Դանիէլը Արուգովունութեան դասերը, որպիսի ղիպուածում ևս ուսուցանէին, կրացարուին նոյնպէս Արքազան պատմութեան օրինակներով։ «Մ' սպանաներ,, պատուերը յիշեցնում է կայենին, Առվակարին, Աւուղին և ձեփթային ևլու։ «Լեր ողորմած,, յիշեցնում է Առվակարի ջրից աղատութիւնը, Բախարին, Դաւթին ևլու։ Եյսպէսով երկու օգուտ է յառաջանում, վերացական հասկացողութիւնքը ընդունում են տեսառականութիւն, և համեմատութիւններով արած պատմութիւնը զանազանակերպութիւն է ստանում։ Կոր Կտակարանի առակները, որոնցից հազիւթէ ստկաւները յարմարվում էին նախընթաց ուսման շրջանին, այժմ զրեթէ կարող են սովորական դառնալ, բաց ի նոցա խորին բացարութիւններից։

(Մատթեոս և Հերոնու)

Պ Ա Տ Ա Կ Ա Ն

ՏԵՂԵԳՎՐՈՒԹԻՒՆ ՇՐՄԿԵՅՑ.

(ՀԵՐՈՆԵԱԿԱՆԱԿԱՆ)։

ԳԵՂԵՂԵՐԱՅԻ ԱՐԵԼԵԼԱՆ ՇՐՄԿԵՅՑ.

Կ դասակարգել մեր զգիւղադ, ոյր առաջեաւ զնեմք և պարտ է իմանալ զնա ամյաբնակ, ուր Տ. Տաճկարնակ. իսկ ուր և.

և 8.՝ ցուցանէ խառն լինելքնակչաց անդ յերկուց ես։ Թէպէտ յայս սահման սակաւ են Տաճիկք, վասն այն զանդ առնեմք ասա, միայն զբաղմաբնակն ըստ թուոյ տանցն ես նշանակեմք։ Ոկտանիմք ի հիւսի կողմանէ քաղաքին երթալ ի վեր, և շրջասփիւռ յածեալ ի թիկանց նորա՝ ի հարաւ եկեալ հասեալ աւարտեմք։

1. 2. Քէյափ կըկին։

3. Վանլըճա առ գետովն ի բարձուէ, որոյ առաջի կայր մի ի կամրջացն։ Առ զիւղիւն վանք, որոյ եկեղեցին վայելչակերտ և գեղեցիկ, կաթուղիկէիւ, և լի են յորմունքն որա արձանադրութիւնք, է որ շրջանակաւ մեծաքանդակ, է որ վերուստ ի վայր. զոր կամ էր ինձ օրինակել. երէց զիւղին ասաց թէ ամենայնն զբեցան ի Ապրգսէ Վարդապետէ Զալալեան, և արպագրեալ իսկ են, որով անփոյթ եղէ. յետառյ տեսի, զի յոյժ յոյժ սակաւունս էր ի նոցանէ առեալ, և ցայսօր յանձին ափսոսամ։ Անդընթերցայ զանուանս Քիւրտիշնանի և Հասանայ, զորոց ասացեալ եմք ի ստորագրութեան Աւանայ։

Ճամատուն սորա կամ զանդակատուն քանդեալ, սրահ նորա է առաջի, և հիմունքն նշանակին. սա է այժմ եկեղեցի զիւղին։

Առ կըկին կողմամբ նորա քանի մի քայլքացատ մի մատուռք գեղեցկաշէնք, համակ ի միոյ կարմրագոյն քարահանքէ ողբքատաշ. նոյնպէս և կաթուղիկէք. և յարեւելս նոցա դամբարանք հինգ, և են որ փորագրեալք են։

4. Միւս Վանլըճա, մօտ վերնոյն, ուր և աւերակ եկեղեցի։

5. Խապս։

6. Խասաղուլ։

7. Տերպէնտ։

8. Թէքնէլի։

9. Օրթա Քիլիսէ. հին եկեղեցի փոքր։

10. Իլի գիւղ. սա և հետեւեալ իննեակ զիւղօրայքդ կան յընդարձակ ձորի ինչ, որ Իլի անոււանի։

11. Շէլէպ կէչիւտ։

12. Պէնտրվան. անդ կայ բերգ. մերձ նմին և լըզուլ-իոչ աւերակ. ուր ասեն լինել եկեղեցի արձանագրութեամբ։

13. Խաղանձի։

14. Շիշ-թեփէ, ըստ անոււան լերին առ որով կայ։ Այս երկու զիւղքս ի հիւսային ծայր սահմանիս կան. և են ի ճանապարհ յԱղէքսանդրա-պօլսոյ յԱնըրքելիկ և յԱնըցիա գնացից։

15. Փայթար օղլու. Տ: ուր կայ և վանք քայքայեալ։

16. Չոռի։

17. Շըզլար։

18. Կուռ ծի-եօլի։ Ի թիկունս սորա կայ Խարախսաւ լեառն. և ի վեր քան զիւղին ի միջակի գոյ մեծ աւերակ շինատեղոյ։ Ուր լեալ են հինգ ձիթահանք, զորոց քարինս ածեալ են ի քաղաքն։ Անդ են և բաղում ջաղացք, որք ի ջուրց լերանցն իջելոց շրջեալ են. և այլ շինութիւնք ոչ սակաւ. որում այժմ անուն տան մեծ Խարապա, կամ Խարախսաչու Խարապա, և է արօտական տեղի զիւղականացն։

19. Փալուալի։ Որպա են որք ի ձորն Իլի գտանին։

20. Թօփառլի։

21. Խոնախ-իլրան. ուր վանք քայքայեալ։

22. Ապը-եար։

23. Եկո -քիլիսէ, զոր ոմանք Եկո եօլի
անուանեն, այն է սպիտակ ձանապարհ
վասն սպիտակ հողոյ լերինն՝ Զբագուխպու
ասացեալ, յորմէ անցեալ իջանին ի 1. ռուր:

24. Չաշուր:

25. Հածի - Կազար. - Վ. ռուր:

26. 27. Ո՞եծ և Փոքր Քեփենեկ:

28. Տիրէկլէր. արտաքոյ գեղջն վանք:

29. Չըախլու:

30. Տիւզքենտ. Հ. 100 տուն:

31. Ռէնը - եապի:

32. Թեփէ տեօլէք:

33. Արըխ - վէլի:

34. Վ. օլդաթ:

35. Քըրք - տէլիքմէն, Տ: Եյս երեք
դիւղք կան ի սահմանակցութեան Ապա-
րանի յարեելս Եղէքսանդրապօլսց. ընդ
այս և սայլք անդամ յամարան երթեեկեն
յԱրարատ և յԱրեան, և է համառօս
ձանապարհ:

36. Վարս - քիլիսէ. Հ. 300 տուն,
որ և բաւական գիւղաքաղաք ձեւանայ. են
անդ և արհեստագործք, վանք քայքա-
յեալ: Աստի սկսանին գիւղորայ ըն պա-
տել զԵրագաճոտամբ:

37. Դարհալլը:

38. Պայընտուր:

39. Շլօֆ խան:

40. Թալիսողի:

41. Խմբիսան:

42. Վ. ռութի Խոշլախ:

43. Թօմարտաշ:

44. Պարօնի գիւղ:

45. Վ. ասմալի:

46. Վ. ազանձի, որիշ ի վերնոյն:

47. Վ. ուլիճան:

48. Եկենուկը:

49. Կորաշէն:

50. Կիւղէլ - տէրէ:

51. Պաշ - գիւղ:

52. 53. Ո՞եծ և Փոքր Եռըխ վելիք, եր-
կոքին սոքա յԱրագածու ըմպէն զջուր,
որպէս և Վ. ըսպախ:

54. Վ. ըսպախ, ուր է և վանք Հառըծու
Ա. Աստուածածնի, վայելուշ ասեն շի-
նութիւն սորա քան զՀոսումնաի վանաց.
ուր կան և բազմապատիկ արձանագրու-
թիւնք, զօրս ժողովեալ էր մի ոմն ի վար-
դապետաց նորա. այլ թէ յիւր մէ, թէ ի
սագրելոյ իւրում մեծի՝ զլացաւ տալ: Աստ
է և հին պատկերն անուանի՝ փոխադրեալ
ի Վ. անացն Բասենոյ. և է ուխտ հոչա-
կաւոր մինչև ցայսօր:

55. Արթիկ, Հ. 150. ուր կայ հին ե-
կեղեցի, վերնայտիկ նորաբերդ, և ի բա-
ցեայ վանք ամբողջ:

56. Ո՞չիսալի. հին եկեղեցի, բերդ ի վե-
րայ:

57. Հոռոմ, Հ. 100. հին եկեղեցի
նոյնպէս:

58. Ազունիլի:

59. Արմուտըւ:

60. Մահմուտճուխ, ուր աւերակ վանք,
և միւս ևս որ այժմ եկեղեցի գիւղին է:

61. Շիրվանճուխ. հին վանք քայքա-
յեալ:

62. Ոէյիւտլիւ. է և ուխտատեղի աշ-
բերն սաստիկ ցուրտ ջրոյ, ի վերայ նորա
գրեալ: Ուուրբ Գըրիգոր,,:

63. Պօղազ - քէսէն:

64. Մօլա - կէօկչէ. առ որով Եշըխ - ալի
աւերակ:

65. Եափուլու. Հ. 100. ունի և հին
բերդ:

66. Վ. էլ - աղին:

67. Արվան - վերտին:

68. Թռագշան Գ. ըշլախ, Հ. 100 տուն:

69. Գ. ազարապատ, յանուանէ այս վերջին շնորթիւն սկսանողին:

70. Աղին:

71. Պօզմողան:

72. Գ. եղաձ:

73. Չըրփլու, առաջի սորաէ երկրորդ կամուքին:

74. Գ. ըզըլ - քիլիսէ, Հ. 100. աստ դաղթեցան փոխադրեալքն ի գեղջէ Հոռոմոսի վանաց, և չէ հեռի անտի. է անդ փոքր վանք արձանագրութեամբ, որ այժմ եկեղեցի դիւղին է, և մեծացուցանել կամին:

75. Աէօյէրչին:

76. Գ. ըզըլ - զուլէ. մեծաշէն և հոչակաւորեկեղեցի սորա քայ. քայեալ, որ երեխ լինել սակաձե. և ի վայր քան զնա առ Եխուրեան գետով ի բարձու ինչ աեղլոջ Կարմիր վանք Վ. եթէ - քիլիսէ կոչեցեալ:

Եստանօր ի հանդիպոյ Հոռոմոսի վանաց գաղարեն գիւղորայք այսր մասին, և սկսանի նախ ամայի տեղին՝ զոր Խըրըխ անւանեն, ուր չորեքտասան գիւղս հիմնել հնար է. բայց առ ի չգոյէ ջուրց մնայ այնպէս:

Ի բարձրութեան Արագած *) լերին լրակ իմն է. ասեն թէ ի նախնի ժամանակս

(*) Ճիշտ բարձրութեան լերինս չքաւեցաք լինել գիտակի Ա. յլ Կարապետ Ա. արդապետ Շահնազարեան պատմեաց մեղ, թէ եղի ի բարձրակատար լերինս, զերեսս եղեալ ի գետնի գիտեցի, քան զկէսն Մասեաց լերին բարձրագոյն գտի. Արդ զի Մասիս ունի 19760 աշխարհազարական քայլ բարձրութիւն, և սմա պարտ է տալ գոնէ 11000 աշ-

զան նորա խոտորեցուցեալ յայս կոյս՝ շենութիւնս արարեալ են: Ա. յլ ժմ քանզի ի կողմն Արարատայ թափի, ոուզի յերկիր, և անշետ լինի, ոչ մի ինչ օգնեալ վայրացն: Կառավարութիւնն ի քանի ամաց հիտէ ի խորհրդի է դարձեալ զայն ոտն շրջել յայս կոյս, և կանգնել գիւղորայս, բայց դեռ չէ եղեալ ի գործ:

Ա. յլ կրորդ՝ անափի ի վայր ընթացեալ ի հանդիպոյ Ենուոյ, և արևմտեան Շիրակայ, այնչափ ամայի տեղիք են, յորս աւելի քան զյիսուն գիւղս հնար է կանգնել. բայց առ ի չգոյէ ջուրց և անդ, կայ պարապորդ, և են այժմ ձմերոց արօտական խաշանց Վ. բաաց և Աշկետեաց:

Պատմեցին, թէ հրաման լեալ է Երքունուստ, և հոգածու է մեծաւ պատրաստութեամբ յառաջիկայ ամիս սկսանել ի ստորև Աղեքսանդրա - պօլսոյ պատրաւոլ խոտորեցուցանել զԵխուրեան, և ածեալ զիողամբ Խըրըլ - քիլիսէի տալ հոսել յայն ընդարձակ սահման, և շնորթիւն հաստատել մինչև ցանկիւն անդը, տարածանելով մինչև ցԱրտարապատ:

Օ. այս ամայի վայրքս՝ Յովհաննէս Աշպիսկոպոս Շահնազարունեան ոչ այնչափ ի բաժնի Շիրակայ համարէր, այլ յԵրշարունիս՝ այն է Աշրասխաձոր:

Ա. յլ Շիրակ իսկ յԵրշարունիս համարեցաւ, յորժամ Տրդատ Երքայ պարգեւեաց Երշարի որդւոյ Կամսարայ, որոց երկիր Պայազատութեան էր Աշրասխաձոր: Ի գնել Եշոտոյ Մասկերի Բագրատունոյ

Խարհազարական քայլ բարձրութիւն, այնպէս զի գագաթն սորա ցատորտս ձեանց նորա հասցե, զի յամարան ի գագաթան սորա ձիւնք հալին:

ի Կամսարականաց անտի, յամի 783, զայս
մասն առ յիւր բաժնի, թէ թող նոցա,
չէ յայտ: Միայն այժմեան Կառավարու-
թիւնն համարի ի բաժնի Ծիրակայ, և թէ
շնութիւն գտցէ, ընդ իշխանութեամբ
Կահանգապետին Եղեքսանդրա - պօլսց
անկանի:

Չմերան ճանապարհ յԵղեքսանդրա -
պօլսոյ յԵրարատ առ Վըզըլ - քիլիսէին
անկանի, յորմէ անցանէ առ Մասարայ,
և անտի յԽջիմիածին, և յՃրեան:

Յայս ամենայն զիւղորայս երեք հաղար
առւն ձայ բնակիչը են, ուստի ի քաղաքն
և ի սոսա են տունք հինգ հաղար, ամենե-
քեան զրեափիմիւս բաժնիցն Ծիրակայ, ի
Զարիշատէ, և ի զիւղորայիցն Կարուց
աստ գաղթեցան, որք մեծաւ մասամբ ի
յարձակմանց Լեզկեաց, և ի Տէլի անոււան-
եալ զօրաց, և ի հարստահարութեանց
զիւղատեարց իւրեանց՝ յողիս եին ապաս-
տան:

Յայնժամ տեսեալ սոցա՝ թէ Ոսուսք
դառնան յՕսմանեան սահմանաց, ակն
եղին այսր բաժնի Ծիրակայ, և նախահո-
գակ լեալ, ի զիւղին ցանեալ զօրմանիս,
եկին առտ քօթան վարեցին, և միւսոյ աա-
րուոյ սերմանացանութեան երկիր պատ-
րաստեցին, դարձան հնձեցին զանդաստա-
նըս, զսաշարս, զտանց գերանս, և զամե-
նայն զոր միանգամ ունէին, զիւրութեամբ
իմ բարձեալ ածեն յայս կոյս, զտունս
սարքեցին, և ի միւս ամի սերմանացան ե-
ղեալ, յայնչափ ամաց հետէ ամայի թող-
եալ և պարարտացեալ երկրէ՝ առատու-
թեամբ մանգաղաքաղ եղեն, որոց և եօթ-
նամեայ աղատութիւն ի հարկաց՝ նպաս-
տամատոյց եղեւ: Ոչ սակաւ օգնեաց նոցա

և շնութիւն բերդին, յոր պարապորդքն
երթեալ վարձուք աշխատէին: Եւ այս
պէս ոչ մի ամ պարապորդ մնալով ի շա-
հուց, և ոչ վրանարնակ յածելով՝ քան
զամենայն գաղթականս սոքա բարերազրիկ
գտան:

Եւ քանզի ոչ ոք ի գաղթելոց անդր
քան զսահմանազլուխ տեղիսն ի խորս ըն-
թացան, այսպէս և սոքա յայս երկիր ամ-
փոփել հոգ կալան: Իայց ինքեանք բազմա-
ցան, և այլք ի փախստէից եկեալ հետ-
զհետէ և յարեցան ի նոսա: «Եա և Կա-
ռավարութիւնն ի Տօխոպուր և ի Մալա-
կան ժողովրդոց *) զբազումս ած գաղթե-
ցոյց ի տեղիս տեղիս, երկիրն ոչ բաւակա-
նանայ, այնու զի՝ ոչ ըստ ագահ ըղձի բա-
ւեն սերմացան լինել, տեսեալ՝ զի այն
յոտին զրամէն, և արքունի ցորենահա-
ւաքք նախավճար զրամովք կան պատրաս-
տական ի գնել:

Ի վարել զերկիրն՝ տեղի արածելոյ խա-
շանց նուազեաց, հարկեցան յամարան
զհօտս իւրեանց հանել ի լերինս կէս տա-
նըն, և կիսոցն մնալ ի զիւղսն առ ի վերայ
կարոյ անդատանաց, և ոչ վայելել առատ

(*) Այս երկու անուանակոչութեամբս ժողո-
վուրդ՝ միացեղք և միադի՞նք իցեն թէ զանազան-
եազք, ոչ բաւեցայ ստուգել: Իայց Տօխոպուրք
պաշեն զօրէնս ինչ Հրէական, և պարտին լինել
ի Սամարացւոց կամ ի Սադուկեցւոց.

Կառավարութիւնն 25000 տունս ի կողմանց
Պրիմու ած գաղթեցոյց ի Հայաստան և ի Վրաս-
տան, շնորհեալ եւթնամեայ աղատութիւն ի հար-
կաց: Ինքեանք և կանանիք նոցա բրաջանք են ի
գործ և ի վաստակ: զիւրութեամբ քան զմեր
դործեն, և բազմօք շահին. են և բազում կօշկա-
կարք ի նոսա:

մածուն, և թան, նա և ոչ խոտաքաղ լինել առատութեամբ՝ առ դարմանել զիգինս և զիսաշինս ի ձմերան, որք են կարեւորք զեղջկական կենաց :

Յամն յառաջինս յորժամ իսպառպարապորդ էին բաժինքն Շիրակայ, ածեին անողը արածել զիսաշինս, և զիսոտրարձեալ տանեին։ Խակ յորժամ բակ արգելանաց Օգուշարանին սաստկացաւ, և յամնայն տեղիս պահապահք կարգեցան, սկսան ի նեղ անկանել սոքա:

Ոմանք ի գիւղորայից՝ որ ի հանդիպոյ Կեօլի, անցագիր առեալ, երթան յԵպարքոսէ Արուց հրաման ընկալեալ, անդ երթան խոտաքաղ լինին, և ածեալ զիգին առ զետեղերբն։ Խւապա ընդ Օգուշարանն անցեալ, և որ ի վերայ սառուցից, և որ ձիովք բերեն և դարմանեն զիենդանիս, որք են ինքեանց գործ մեծի և դժուարաբեռն աշխատութեան, որ տայ յիշել նոյց զաւուրսն զառաջինս:

(Ծարաւակելէ)

ՀՆՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Ի ԳԱԼԱՑԻՆ

Ե Ե Ն Զ Ա Կ Ո Ւ .

ՅԱԴՎԱՉԱՐԱՆՈՒԹԻՒՆ.

Հայրենեաց հնութիւնքն այսօրուան օրս հայրենասէր որդւոց մեծագոյն մասին անձկակարօտ հետաքրքրութիւնն զարթուցած են։ Խւ յիրաւի ի՞նչ կայ երկրի վերայ հասկացող սրտի համար առաւել վարելի և նուիրական քան հայրենիք, և ի՞նչ կարող է նորա դաժան վիրաց ու բազմադարեան մղկտացուցիչ խոցերու հանդէպ

աւելի զգալի թուիլ, եթէ ոչ սիրուն հայրենեաց պանծալի կամողեալի հնութեանց նշխարեալ մնացորդք։ Մեր հայրենիքն վշտակոծ Հայաստանն լինելով, թէպէտ և մերթ ընդ մերթ յերևան կհանէ իւր ծոցէն այնպիսի յիշատակարաններ՝ որոց վերայ զրոշմած կտեսնենք իւր արիասիրտ որդւոց կորովարապուկ քաջագործութիւնները, զիւցազնական սիրագործութունները, հայրենասիրական և ազատասիրական անձնանուիրութիւնները, փութաջան և մեծագործ աշխարհաշինութիւնները, և Սոաքելական Ա. Եկեղեցւոյ կարգաց և կրօնի անաղօտ և անսայթաք պահպանութիւնը. սակայն շատ անգամ այն է որ հնախոյզ աչքերն արտասուք քամելով պիտի նշմարեն այն գետինն ու քարերն ոյք ներկուել ռոզուել են բիւր անգամ Մէհրուժանեան, Վասակեան, Արգսեան չարահոգի հայրենանենք դաւաճանութեամբ և մատնութեամբ միլիոնաւոր ողորմելեաց թափուած արեան գետերով, այն շերիմներն, ու մահարձաններն՝ որոց մէջ կհանդշին անհեռատեսութեան և ևականութեան չար նախանձուն զոհ գնացած հայրենաշէն և աշխարհի օգտակար հոյակապ անձանց տժիւններն, այն կիսակործան չէնքերն, և դժուարանշմար աւերակներն՝ որոց տեսաբք և բնակիչք, և որ ի դառն զերութիւն վարեալ, և որ սովու, տանձնանաց, և լեռնաղօդ խստամբերութեան անխայիլի կրակին մատնուած, և է որ վայրինամիտ վայրագասուն թշնամեոյ արիւնարբու սրոյն ձարակ գնացած, թողել են միայն տխուր աւերակաց կտորներ, այն փառաւոր եկեղեցեաց կանգուն ու կործան չէնքերն ու անթիւ նշխարներն, որոց կոր-